

կրճին վրայ ձգուած հին կամուրջ մը, որուն յանդգն կերտ կամարը կը բռնէ վերնաշինուածք մը՝ որ շատ աւելի քիչ հնութիւն ունի քան իւր կամարը, քաղաքին հետ հաղորդակցութեան մէջ կը գնէ գետոյն միւս ափը տարածուող արուարձանը (Պտկ.)։ Միջնաբերդէն՝ քաղաքին հին ակրոպոլսէն՝ տեսարանը կը պարզուի ընդարձակ տափարակին վրայ, զոր Գայլ գետը կ'արգասաւորէ, դաշտ մը երբեմն «քաջաբեր ձիթոյ եւ գինւոյ եւ օժտուած ամէն յատկութեամբ» զբանջելի հողի մը¹։ Ծովուն մերձաւորութիւնն ալ՝ միացած փոխադրութեանց դիւրութեան հետ՝ կ'ապահովէր վաճառականութեան բարգաւաճանքը²։ Յրկու օթեւանով կարելի էր՝ լեռները կտրելով՝ հասնիլ Պողեմոնիոսի նաւահանգիստը³։ Բնութիւնը ստուգիւ նախաահմանած էր Նեոկեսարիան բերդաքաղաք եւ մայրաքաղաք մ'ըլլալու, ինչպէս որ եղաւ ալ։ Կաբիրա (Cabira) անուամբ Միհրդատեանց սիրելագոյն բնակավայրերէն մին էր։ Եւտոյ Պողեմոն եւ իւր յաջորդը հոս հաստատուեցան։ Հռոմայեցւոց ժամանակ մայրաքաղաք եղաւ Պոնտոսի⁴։ Գրիգորի Սքանչելագործի ժամանակ՝ կենդրոն դարձաւ քրիստոնէական քարոզութեան երկրի մէջ⁵, եւ աւելի ուշ՝ արքեպիսկոպոսանիստ աթոռ մը։ Բայց Գ. դարուն կը սկսին իւր աղէտները։ Հիմնադրուած կործանեցաւ երկրաշարժէ մը 344ին⁶, եւ երկրորդ անգամ մ'ալ 499ին⁷։ Եւ միջինդարու պատերազմաց տոնն իրեն տիրանալու համար՝ երկարատեւ կռիւներ մղուեցան Բիւզանդացւոց եւ Մահմետականաց մէջ։ Մասնաւորապէս 1068ին Սելջուկեան զօրավար մ'ալ յարձակմամբ առաւ եւ աւարեց⁸։ Անշուշտ այն Մելիք-Ղազին է՝ որուն շերիմը (Խէ-րդէ) տակաւին կանգուն կեցած է միջնաբերդէն ոչ շատ հեռու, գերեզմանոցին մէջ՝

¹ Ստրաբոն, աւգ. հմտ. յաջորդը։

² Գրիգոր Նիւսացի, Ատրք Ս. Գր. Սքանչելագործի (Migne, PG, XLVI, p. 897 D) Καρποὺς βροῖται ἢ χόρρα, ἢ πόλις κατασκευαῖς κεκαλλώπισται, τῇ γείτοσι θαλάττῃ τὰ πανταχόθεν πρὸς τὸ δοκοῦν κατ' ἐξουσίαν εἰσάγεται (Հայ բնագրին մէջ կը պահին այս մանրամասնութիւնը՝ երկրին քաջաբերութեան, քաղաքին բարեկարգարութեան եւ ծովու մօտ ըլլալով դիւրաւ ամէն պիտոյը հայթայթելու մասին)։ Ս. Բարսեղի Նամակներուն մէջ ալ բաղմաթիւ թղթեր կան Նեոկեսարիոյ գործերուն վերաբերեալ (Migne, PG, XXXII, p. 744 ff.) բայց միայն կրօնական խնդիրներու վրայ կը խօսին։ Սակայն մասնաւոր կ'ընեն հետեւեալ խօսքը (սին 769 B)։ Τί οὖν χροῖ πρὸς ὀνειδιστοὺς καταφρεύειν καὶ ὀνειδισκώποισι μισοῦσθαι καὶ ἐν πανδήμοις ἐστιασεῖν ποιεῖσθαι παροῖον διήγημα. (Ի՞նչ պէտք կայ երազներու դիմել, երազահասներու վարձք տալ եւ հասարակաց խնդիրք մէջ արեւելութեան խօսքեր ընել)։

³ Այսօր ալ ճամբայ մը Նիկարեան Ունիէ կը տանի երկու օրէն պակաս։

⁴ Նեոկեսարի, վերը, Ը, § 16։

⁵ Harnack, Ausbreitung des Christentums, II, p. 175 ff.

⁶ Թեոփանէս՝ յամին 5835. Ս. Յերոնիմոս, Քրոնիկոն, յամին 2362. — Հմտ. վարժ. էջ '80, ճն. 1։

⁷ Թեոգ. Բնթերց, Բ, 54. Հմտ. Bull. Acad. Bel-gique, 1905, p. 563.

⁸ Lebeau, Hist du Bas-Empire, XIV, p. 470.

ուր սիւներու բեկորներ ծածկուած են փշասարդերու միջեւ (houx, չիչխան)։ Հոն՝ տաճկերէն հին ձեռագիր մը կը պահուի, որ այս հերոսին քաջագործութիւնը կը հաշակէ։ Ասոր պարունակութիւնը հաճեցաւ մեզի հաղորդել խօսք մը՝ շերմին պահպանը։ Մելիք խաւրուած էր Մալաթիոյ սուլթանէն. եւ, որչափ ալ Միքայէլ կուսակալը յուսահատական դիմագրութիւն ըրաւ, գրաւեց Նիկարան ու աւարի մատնեց Սքանչելագործի եկեղեցին՝ ուր կը սպասարկէին վեցհարիւրէ աւելի կրօնաւորներ։

Նեոկեսարիոյ վրայ թափուող աղէտներ սկիզբն ըրած էին հին յիշատակարանաց կործանման. իսկ ասոնց աւերումը կատարեալապէս գլուխ ելաւ Սելջուկեանց գրաւմամբ. բայց այս անհետացման փոխարէն չկառուցուեցան հոս ինչպէս եղաւ Սեբաստիոյ մէջ՝ մահմետական գեղեցիկ շինուածներ։ Միայն քաղաքին մօտից վրայ կանգնած շերմին (Խէ-րդէ) գուռը՝ իւր զարդարանաց վայելչութեամբն եւ իւր նուրբ խորշազարդերով՝ հեռուէն կը յիշեցնէ Ռուսի սուլթաններուն մեծ վարժոյցները (Մարէ-է)։ Սելջուկեան աստիճան է հնութեանց մասին Նիկարի աղքատութիւնը. եւ նոյն իսկ իւր անցեալ շքեղութեան յիշատակը ջնջուած է։ Հոս քաղաւած են միայն արձանագրութեանց քանի մը խեղճ բեկորներ (Թ. 388, եւն)։ Նայն իսկ այն եկեղեցիները՝ զորոնք քաղաքիս փառքի յոյն շատարակութիւնը կը պահէ¹, որեւէ կարեւոր յիշատակարան մը չունին այլ եւս։ Ս. Նիկողայոս եկեղեցին բլրոյն զառիւայրին վրայ՝ կը պարունակէ երկու անշան տապանագրէ զատ (Թ. 338—339) բաւական թուով վիմաքարեր՝ որ խաչանիշ են եւ մին ունի ԱՉ մենագիրը։ Բերդին արեւմտեան կողմը՝ Ալլակերպութեան (τῆς Μεταμορφώσεως) կիսակործան մատրան մէջ խորանին սեղանաքարը կը հանգչի հին խարոխի մը վրայ. բայց տառ մը փորագրուած չէ վրան։

Հոս հնախօսական հետաքրքրութիւնը կը կենդրոնանայ ամբողջովին միջնաբերդին վրայ, որուն աւերակները մեծատարած են։ Ասոնք Պարսարի մէջ հանդիպալեռը կը գրաւեն, որ յառաջակարկառ երկարած է դաշտին մէջ եւ գլխաւոր լեռնաշղթային հետ կը կապուի միայն նեղ սարակատարով մը։ Իբր մէկ քիլոմետր երկայն է եւ դէպ արեւմուտք կը խոնարհի գահավէժ վաւիթափութեամբ մը մինչեւ հեղեղատը (Պտկ.)²։ Դէպ ի հարաւ՝ իւր գագաթը կ'իշխէ Վէլիտ-Իրմակի ամբողջ հովտին վրայ, որուն ջրերուն ցալացումը հեռուն կը տեսնուի։ Դէպ ի արեւելք՝ լեռը կը տիրէ քաղաքին, որուն տները սանդղաձեւ վեր կ'ելլեն անոր կողերուն վրայ եւ կը խռնին ու կը սեղմուին բերդին երկայն շրջապատ պարս-

¹ Այս հասարակութեան պատմութեան նկատմամբ տես Wächter, Der Verfall des Griechentums in Kleinasien, p. 9։

² [Տես բնագրին 264 առաջին պատկերը՝ «Ղեկակը հիւսիս-արեւմտէն տեսնուած», երկրորդը՝ «Բաղնիքի մը քնարգոյները»։ Իսկ էջ 265 առաջինը՝ «Մահարձանին աւերակները» եւ երկրորդը՝ «Կամարակապ ներքնաշինութիւնները»։]

պին դէմ: Այս արտաքին պարսպէն՝ որ ամբողջ արեւելեան զառիվայրը կը շրջապատէ եւ դարին անհաւասարութեանց համեմատ ելեւէջներ կ'ընէ, մինչեւ լեռնագագաթին վրայ կանգնած մահաբաժանը՝ պաշտպանողական շինութեանց շարք մը կար, որոնք միջանկեալ զառիվայրը բռնելով՝ պէտք էր որ անառիկ ընէին այս ի բնէ ալ շատ ամուր դիրքը: Այս թանձր շինութիւնը մասամբ մնացած են, թէպէտ եւ երկայն ժամանակէ ի վեր շինութեանց ատաղձ կը մատակարարեն Նիկիայի բնակչաց. մահաբաժանը տակաւին իբր 15 մետր բարձրութեան կը հասնի: Գծուարին է աւերակացոյ այս փակոյտին մէջ ուղղութիւն մը գտնել. անշուշտ կը ցուցնեն մեզի հին մզկիթ մը, հին բաղնիք (համամ) մը. բայց միայն երկարատեւ ուսումնասիրութեամբ կրնայ որոշուիլ այլեւայլ շինուածոց նպատակն ու շինութեան ժամանակը: Պաշարունմներն ու երկրաշարժները պատճառ եղած ըլլալու են բազմաթիւ կործանմանց եւ նորոգութեանց: Այնպէս կ'երևայ թէ կանգուն մնացած պատերը թրքական շրջանէն են: Անագանագոյն ժամանակի մը նշան է պատերուն թանձրութեան մէջ գերաններ գնելը՝ ինչպէս ի Թոխաթալ տեսանք (տես վերը՝ Բ, § 20), անով պատերուն հաստատութիւնն ապահովելու համար. ինչպէս նաեւ անձեւ որմնամասի մը մէջ ծոփորներու եւ քուազարգերու բեկորներ գտնուիլը: Սակայն եւ այնպէս աներկբայ հին կամ բիզանդական են այլեւայլ ներքնակառոյց շինուածամասեր, որոնք մասամբ կամարակապ են, եւ որոնք շինուած են շարժ թե՛ աղիւսներու շարքերով: Վեցանիւնի աշտարակ մը՝ մահաբաժանի արեւմտակողմը՝ կրնայ մասամբ հռոմէական ժամանակէն ըլլալ (Պտկ.): ասի ներքին պատի կորիզին վրայ, որ փոխնիփոխն քարով է ու աղիւսով, պահած է այլեւայլ մնացորդներ գեղեցիկ արտաքին երեսի մը՝ որ խնամով յարգարուած ու ագուցուած քարերով էր (Պտկ.): Սակայն խռատվանելու ենք թէ շատ քիչ բան մնացած է այն հռչակաւոր յիշատակարաններէն, որոնք յաջորդաբար շինուած էին այս բլրոյն վրայ: Բլուրը կը զրուէր նախ, երբ Նէոկեսարիա տակաւին կաբիրա կը կոչուէր, Միհրդատայ Եւպատորի մէկ գլեակը¹, որ վերջէն՝ Պողեմոնի արքունի պալատն եղաւ: Հռոմէացւոց ժամանակ, երբ Պոնտոսի նահանգական ժողովը հոս կը նախագահէր դաշնաւորական խաղուց, կանգնուած էին երկու մեհաններ՝ որոնք աստուածացուցեալ ինքնակալաց նուիրուած էին²: Քրիստոնէայ վեհապետաց օրով՝ ասոնց փոխանակեց Ս. Գրիգորի Սքանչելագործի մետրապոլիտական եկեղեցին, որուն յարակից էին

ընդարձակ վանք մը եւ արքեպիսկոպոսարանը³: Վերջապէս միջին դարուն Սելջուկեան իշխաններն եկան հոս բնակելու մզկիթի մը մօտ, բնագործակուած բարդին մէջ, որուն լքեալ մնացորդները տակաւին զարմանք կը պատճառեն իրենց ընդարձակութեամբը⁴:

Դղեկէն են երկու հետաքրքրական խորաքանդակներ (Պտկ.) որոնք քանդակուած են գորշ եւ շատ հատկաւոր կրաքարի մը վրայ, եւ որոնք նորերս վարչատան (թահթ) պատին մէջ ագուցուած էին⁵: Մէկուն վրայ կը տեսնենք մօրուսաւոր անձ մը, հագած երկայն պատմուճան մը՝ մէջքը գօտիով զսպուած, եւ ձախ ձեռքով կը բռնէ բուն մը՝ ծայրը գնդով մը. անտարակոյս թագաւոր մ'իւր գաւազանաւ: Միւս պատկերը աւելի նորանշան է. նման զգեստով անձ մը ձախ ձեռքը վեր վերցուցեր է՝ մրձով մը կամ կացնով մը զարնելու ձուածեւ անորոշ առարկայի մը վրայ՝ զոր միւս ձեռքով դրած է տախտակի մը վրայ, եւ այս տախտակը վեր կը բռնէ թղուկ մը կամ տղայ մը: Վերջինս այս տարօրինակ սալն իր գլխուն վրայ կռթնցուցած է եւ երկու թեւերով վեր կը բռնէ:

¹ Թեոփանէս՝ յամի աշխարհի 5835 (էջ 37, 11, հրատ. De Boor) կը գրէ՝ Νεοκαισάρεια Πόντου κατεστρώθη (յամի 344 Բ. Բ.) πλὴν τῆς ἐκκλησίας καὶ τοῦ ἐπισκοπείου καὶ τῶν ἐκεῖ εὐθεθέντων ἐνλαβῶν ἀνδρῶν (Նէոկեսարիա Պոնտոսի կործանեցաւ՝ բաց ի եկեղեցին եւ եպիսկոպոսարանէն եւ հոն գտնուող բարեպաշտ մարդիկ ներկէն). հմտ. Յերոնիմոս, Քրոնիկոն, յամի 2362): Գր. Նիսացի, Վարդ. Ս. Գր. Սքանչելագործի (Migne, PG, XLVI, p. 897 D) կը գրէ՝ Ὁ ναὸς οὗ τὰς ἀρχὰς ἐκεῖνος δὲ τις τῶν μετ' ἐκεῖνον ἐκείνου ἀξίως, ὁ μέγιστος τοῦ παρόντος δεικνύμενος... τῷ περιφανεστάτῳ τῆς πόλεως ἐναπέθετο. [Այս հաստաճ բլուրովն խառնակ ու աղաւաղ է հայերէնի մէջ, որ ամբողջ պատմութեան այժմ՝ այսպէս է՝ «Վարք եւ Վիլյո» Ա, 322—3՝ «Հիւեր յետ այնորիկ տուն աղօթից, եւ սեղան ուղղեալ» կատարեր զինասարեր խորհուրդն, եւ ամենեքեան ընչիւք եւ մարմնով առ փոյթն սպասաւորէին: Այս տաճար մինչեւ զայժմ ցուցեալ լինի. աստուածային իմն շնորհիւ կատարեր գործն որ յԱստուծոյ իսկ վկային մեծի գով գործն: Քանզի ի շարժման ու մեծ սաստկագունի քաղաքին, առ մերով ժամանակօր եղեալ, եւ արքունական ապարանիցն եւ այլ քաղաքին շինուածոց տապալեալ, միայն մնաց տաճարն այն անսասանելի եւ անխախտիւ, որպէս զի յայտնի երեւի զօրութեանն Մատուճոյ եւ նորին աղօթիցն գործն:] Ուստի եկեղեցին ակրապոյտի մէջն էր: — Թեոփ. Ընթերց. Բ, 54 (էջ 583, հրատ. Reading) կը գրէ՝ Ὁ οἶκος ἐν ᾧ ἦ θύκη Γεργασίου (τοῦ Θασματουργοῦ) ἐντὶν. (հոս եկեղեցւոյ՝ յորում տապան Գրեկորի Սքանչելագործի է) — Այս եկեղեցին՝ որ եկեղեցական պատմաց համեմատ հրաշալիք րու թրքաց ասպատակին ատեն (տես վերը էջ 77):

² Հմտ. Le Strange, The lands of the Eastern Chaliphate 1905, p. 142. հմտ. p. 147:

³ Հմտ. Համբլիլ, Ա, էջ 346: (Դղեկին) պարսկացւոց անասուններ, որոնց երկուքը կը ներըստ երեւութիւն երկաթագործ «գարբին» է: Այս «գարբին» է մեր ձախալողմեան պատկերը, (տես գլ. բնագործ էջ 269):

¹ Սարաբոն, Թ. Բ, 3, § 30:

² Առաջինը կ'երեւայ թէ նուիրուած էր Ագոստոսի, որուն պատուոյ համար կը կառարուէին Ալփեոս (Ἀλφειο) կոչուած խաղերը՝ համարէն արդէն Պողեմոնի եւ Պիթագորի կողմանէ: Աղբթանդը Սելեուքէ սկսեալ գրամներուն վրայ կը տեսնենք երկու շրջեքսիւնեան տաճարներ քովէ քով, եւ քաղաքը նոյն ատեն կ'առնու յորժընջաբո ճիշտ քաղաք (երկրոյ մեհանակալ). ատեն Բարբլոն եւ Ռայնախ, անդ. Ա, էջ 91, Թ. Բ. 37 եւն:

ման կերպով յորդած ողողած էր՝ անձրեւներէն ու ձիւնահալքէն, եւ՝ ինչպէս մեղի ըսին, ճամբան անանցանելի եղած էր. Ուստի ստիպուեցանք լեռներու ճամբան բռնել. եւ հրաժարելով սայլերէն՝ որոնք լաւ ու գէշ մինչեւ այստեղ մեղի հետեւած էին, հարկադրուեցանք մեր բեռները բառնալ գրաստներու վրայ, որ՝ շնայելով այս կորովի գրաստներու տոկունութեան՝ զգալապէս յամեցուց մեր չուն։ Ասոր փոխարէն՝ կրցանք Պարխարի շաւիղներէն կտրել անցնիլ աշխարհ մը՝ որ աշխարհագրական տեսակիսով ցայսօր գրեթէ անծանօթ երկիր մը մնացած է¹։

Ճամբայ ելանք մայիս 19ին։ Պատիւ յուսադուլութիւն եղած էր մեզի՝ հրաշալի հնութիւններ գտնելու մերձակայ լեռնագագաթի մը վրայ, որ պատճառ եղաւ գէպի հիւսիս մեծ խոտորում մ'ընելու։ Նախ հետեւեցանք գէպի Ուշիէ տանող պողոտային, որ Նիկոսար-Սուրբ հովտին մէջ ոլորապտոյտ կը բարձրանայ, յետոյ՝ Զէրքէլէր կըզլը-բաշ շէնին քով՝ շեղեցանք գէպի հիւսիս, անտառներու միջէն ելլելով մինչեւ Արֆու գիւղը՝ որուն մասին խօսեցանք (տես քիչ մը վերը)։ Յունաբնակ այս գիւղը տեսակ մը բնական դարատափ մը կը գրաւէ, ուր ցորեն կը ցանուի, հազար հարիւր մետր բարձրութեան մէջ։ Մեր ոտքին առջեւ Նիկոսար կանաչութեան մէջ կը կորսուէր՝ լեռան մէկ խորշակեան մէջ։ Յետոյ կրկին սկսանք վեր ելլել գէպի արեւելք, կաղնիներու, կնձիւններու եւ սոճիներու բարձրամայրի անտառներու մէջէն։ Ճամբուն երկայնութեան յաճախ կը տեսնուէին մեծ տափարակ քարերով հին քարայրատակի մը մնացորդները։ Նիկոսարէն շարունակէս ժամով հասանք Դիւզ-Տաղի գագաթը։ Անտառները տեղի տուած էին արօտներու, ուր ծովու երեսէն հազար հինգ-հարիւր մետրէ աւելի բարձրութեամբ՝ կը շրջէինք հովասուն ամառաստաններու (եայլ) մէջ, եւ ուր կը քշեն կը բերեն ամէն տարի Անատոլիոյ տուարածներն իրենց հօտերն ու նախիրները, ինչպէս կ'ընեն Ալպեանց պաճարաբոյժները, երբ տօթը զիրենք դաշտէն կը հալածէ։ Յաճախ այս հովասուն տեղերն ուրիշ նշան մը չունին՝ բայց եթէ քանի մ'ապաստարաններ, որոնք կազմուած են հորիզոնաբար դուռած գերաններէ, որոնք կը հանգչին խոշոր քարերով որմախարիսներու վրայ։ Երբեմն ալ բնականման օթարանաց կերպարանք կ'առնուն, կազմուած քանի մը տնիկներէ եւ երկայն խղիկներէ (baraque, քորք) որոնք իրր ախոռ կը գործածուին։ Երբ ամէն կողմ ազատաբար ճարակող հօտերն ու անդեպք կը լեցնեն

այս հովասուն ամառնային գիւղերը, ասոնք կը կենդանանան շինական կենօք մը՝ որ կը յիշեցնէ հին հովութեան թիւները (Պտկ.)²։ Բայց երբ մենք անցանք՝ ասոնց շատերը տակաւին ամայի էին եւ սառնապատ, որովհետեւ լեռնագագաթներուն հովանեղին ներքեւ ձիւնակոյտերը տակաւին յամաբար կը հալէին։

Աւելի ամառանոցէն անդին՝ Եօրի-Էֆէր շէրքէս գիւղին մօտ՝ հասանք վերջապէս այն քարուտ սարակը, որ մեր առաջնորդին խօսքին համեմատ՝ երբեմն կրած էր քառասուն կուսանաց (կըրէ-կըշլը) հին գիւղակը. սակայն ուրիշ բան չկրցանք գտնել՝ բայց եթէ ժայռակոյտներ առանց պատի մը հետքին։ Յուսախար շարունակեցինք ճամբան գէպի ուրիշ ամառաստան մը՝ Կար-Բաշ անուամբ։ Լեռան մէկ մահկաձեւ բացուածքէն հեռուէն խորատոյզ կը հայինք Նիկոսարի հովտին վրայ, որուն ծայրն է քաղաքը գրեթէ անշարժելի։ Պղծակը սեւ կիտանիշ մը կ'երեւայ՝ Գայլ գետոյն լուսաճաճանչ կորագծին մօտ, որ մեզմէ հազար չորս հարիւր մետր վարը օձապտոյտ կը գալարեր (Պտկ.)։ Շուտով հանգիպակաց ղառիվայրին վրայէն՝ անտառական գօտին անցնելով՝ իջանք մինչեւ Բաշ-Չէֆէլէ, որ ուղիղ ճամբով Նիկոսարէն միայն հինգ ժամ հեռու է։

Ամբողջ օր մը (20 մայիս) արգիլուեցանք այս աննշան տեղը հեղեղանման եւ մշտատեւ տեղատարափէ մը, որ ճամբանները վտակներու փոխեց եւ մեր օթարանը՝ լճակի մը։ Բայց որովհետեւ դաւառապետը (Բաբէր) իւր աղջկան հարսնիքը կ'ընէր՝ մեր տաղտուլութիւնը փարատեցաւ անվերջ ցայգերգով մը, զոր կը կազմէին թմբուկները եւ խոտաձայն սրարինգները («զուռնայ»), եւ զոր մէջընդմէջ կ'ընդմիջէին ատրճանակի հարուածները։ Մահմետական գիւղս երկու հարիւր տուն է, եւ տները միայն փայտակերտ մըն են՝ առանց քարի ու գամի։ Չորս պատերը կը շինուին երկայն ու զօրաւոր գերաններով, որոնք հորիզոնական ուղղութեամբ կը տարածուին ու վրայէ վրայ կը շարունակեն։ Գերաններուն ծայրերը կը փորուին եւ այն տեղէն խաչաձեւ զուրս կը ցցուի կրկին շաղք մը ստուար գերանագլուխներու՝ որոնց մէկ մասը երկայնութեան պատերին, միւսները՝ լայնութեան պատերուն կը վերաբերին։ Անջրպետները կը խցուին երբեմն խրճակներով եւ կաւահող ծեփելով։ Տանիքին վրայ ալ միեւնոյն հողը ստուար տակտակներուն վրայ կը տարածուի ու կը պնդացուի, որով միահարթ տամալի մը կ'ըլլայ։ Շինութեան այս շատ նախնական ոճը կը գործածուի Պոնտոսի երկրին ամէն այն կողմերը՝ ուր անտառները տակաւին չեն անփոխութեան շարունակուած ըլլալու է հնութենէն

Ancient Roads (ի «Geograph. Society, Suppl. papers» III, 5), 1893, p. 729 ff. Բայց իւր ուղագծին երկրորդ կէտին՝ ինքն ալ ստիպուած էր գէպի ը բարձունքներն աճապարեւ ելլել։

1 Այն քանի մը տեղեկութիւնները՝ զորոնք այս կողմերու մասին կրնան գտնուիլ հին ուղեւորներուն քով, ի միասին հաւաքած է Ռիտտեր, անդ, էջ 216 եւն։ - Նոյն իսկ Ալբերտի վերջին քարտէսին (Թերթ, Սեբաստիա) ջրագրութիւնը գրեթէ բոլորովին ենթադրական է, ինչպէս կը ցուցնեն կիսանշաններն ալ։ Մեր ուղեւորները գտնէ քանի մը ճշգրտագոյն փաստեր կ'ընծայեն։

1 Յետ բնագրին էջ 275 մեծագիր Պատկերը՝ «Ամառաստան մը Նիկոսարի մօտերը»։

2 Պղ. բնագիր էջ 280 պատկերը կը ցուցնէ այս տեսակ քանի մը տներ Մա'ոփէն-Կալէփ տեղւոյն։ Հմտ. նաեւ § 29ի մէջ գրուած Ալափի տեսարանին պատկերը (բնագրին էջ 326)։

պահ, բերդերէն մին, որոնք Պարխար լեռնա-
շղթային մէջ սփռուած էին, եւ որոնց մէջ յապա-
պովի պահած էր իւր գանձերը: Այս օրերէն շատ
աւելի՛ այն ժամանակն այս երկրաբաժինը «Ջրառատ»
էր եւ անտառախիտ, եւ ամէն կողմէ կտրուած սե-
պակող խորխորատներով եւ գահաւեժ անդունդ-
ներով՝ մեծ գիւրութիւններ կ'ընծայէր պաշտպա-
նութեան համար¹: Մա'ադունի թուրքերն ապա-
հովցուցին թէ հոն յաճախ կը գտնուին գերեզ-
մաններ հին խեցեղէն ամաններով. բայց դժբախ-
տաբար այս վերջիններէս բեկոր մ'ալ չկրցան ցու-
ցնել մեզի: Յուցուցին միայն բլրակին արեւմտեան
կողին վրայ մահաձուլական սուրբի մը գերեզմանը՝
զոր կը յարգեն, եւ որ վեհաշուք ծառէ մը հո-
վանաւորեալ է:

Մա'ադունէն զառիթափ էջք մը կ'անէի
վրայէն՝ մէկ ժամէն քիչ մ'աւելի՛ կը հասցընէ Գե-
լե-Վե-Սո, որ կէկիկ-Իրմակի մեծ մէկ օժանդակն է:
Հեղեղատիս, որուն միջէն կը թաւալին գետոյս
սկախառն ջրերը, անձկագոյն մէկ տեղը կ'անցնինք
փայտէ անցարանէ մը՝ որ յանդգնօրէն կախուած
է երկու ափերուն քարափայտերէն՝ կատարի հո-
սանքէն վեր գոնէ երեսուն մետր բարձրութեամբ
(Պակ): Ասկէ ետքը շաւիղը ծամածուռ շրջան-
ներով կ'ելլէ երկայն սարագագաթ մը՝ որ գէպի
հարաւ յառաջակարկառ երկարած է եւ բարձր
հրուանդանի մը նման՝ գետէն կը բաժնէ գետակը,
որ անոր մէջ կը գահաւիժի՝ մեծ աշուռաշէ, կաղ-
նեաց թաւուտներուն եւ եղեւնեաց անտառին
միջէն, որ այս երկրաշէջուն կը ծածկեն, մեջքնդ-մէջ
հոյակապ տեսարաններ կը պարգուին մերթ գէպի
Խսկէֆաթ-Տաղի սեւաթոյր կատարները, որուն
առջեւ Մա'ադունի դղեակը կանգնած է պահակի մը
պէս, մերթ գէպի կէկիկ-Իրմակի խորին հովիտը,
ուր գիւղերը գունաւոր բծերու պէս կ'երեւան:

Այս հովիտը հասանք Զեբիի կոչուած տեղը,
ուր անակնկալ տեսարան մը բացուեցաւ մեր
առջեւ: Այս տեղը թէպէտ եւ որեւէ մշտակայ
բնակութիւն չկայ, բայց ոգեւորեալ խուռն բաղ-
մութիւն մը հաւաքուած էր հոն՝ տարեկան տօնա-
վաճառի մը պատճառաւ: Վաճառականներ եկած
էին Մարգուանէ, Սեբաստիայէ եւ աւելի հեռուէն
ալ. ոմանք ուտելի ապրանքներ բերած էին, ու-
րիշները՝ պղնձի անօթներ կամ փայտակերտ առաք-
կաներ, միւսները՝ արջառ ու հաւեղէն: Ասոնց մէկ
մասը կ'օթագնէր սպիտակ վրաններու տակ, որոնք
իրենց թէ կրպակն էին եւ թէ բնակարանը. ու-
րիշներ ապաստանարան գտած էին խղիկներու մէջ՝
որոնք կը կաղմուէին վրայէ վրայ գիլուած քարե-
րով եւ իբր ծածկ ունենալով գալար ոստեր: Գիւ-
ղացիք խուռնրթաց հոս կը գիմէին շրջակայքի
ամէն կողմերէն՝ իրենց գնումներն բնելու համար,

¹ Մարարոն, ԺԲ, 3, 28, էջ 555 C կը գրէ՝ ἡ γὰρ
τοῦ Παρθάδρου πᾶσα ὄρεινὴ τοιαύτας ἐπιτηδεύσεως ἔχει
πολλὰς, εὐνδορὸς τε οὖσα καὶ ἐλώδης καὶ ἀποτόμοις φά-
ραγγεὶ καὶ κρημνοῖς διεκλιμμένη πολλὰ χόθρον. (Պարխարայ
ամբողջ լեռնամասը շատ յարմարութիւններ ունի, վասն զի
ջրալից է եւ անտառառ եւ անմահաշէրի վճերով ու գահե-
րով կտրուած շատ կողմէ:)

եւ թուրք տեսուչ մը (Գե-Գե) խաւրուած էր իշ-
խանութեանց կողմանէ՝ այս շինական վաճառա-
նոցին անդորրութեան հսկելու: Տեղւոյն բնու-
թիւնն ալ նուազ նորանշան չէ քան այս ե-
ռացող բնակչութիւնը: Երկայն գծի մը վրայ՝ որ
յայտնապէս գետնին խորունկ մէկ պատառուածքին
կը համապատասխանէ, բաղմաթիւ աղբիւրներ կը
բղխեն: Ոմանք հզօր ժայթքումներով կը ցայտեն,
ուրիշները՝ խաղաղիկ կը բղխեն կամ կը զեռան
պղպղալով: Իրենց բարեխառնութիւնը կը տարբերի
11էն մինչեւ 46 հարիւրամասնեայ աստիճան. եւ
ամէնէն ջերմ ջրերն առատօրէն կ'արտաշնչեն
ծծմբային գոլորշիներ: Ջրերէս մէկն ալ ըմպելի
չէ. հոսելու ատեն կրային մուր մը կը թողուն
շողշողուն սպիտակութեամբ, որ ի վերջոյ ապառա-
ժին վրայ ձիւնակոյտի նման շեղջեր կաղմած է: Ասի
նմանօրինակ գործողութիւն մըն է անոր՝ որ Փուիւ-
գիոյ Հերապոլոյ «սուր բաղաքին» հռչակաւոր
ջրվեժներուն մէջ երեւան կու գայ: Այս խորհրդա-
կան երեւոյթը հաւանօրէն պատճառ ալ եղած էր
հեթանոսութեան ժամանակ Զեբիի մէջ պաշ-
տաման մը հիմնարկութեան, եւ անոր տարեկան
տօնին նոյնպէս տօնավաճառ մը կցուած ըլլալու
էր՝ ինչպէս բաղմաթիւ ուրիշ ամենափոքրով տօնե-
րուն: Արդէն հնութեան մէջ կը հաւաքուէին
վաճառականներն ամէն կողմանէ, կը բնակէին
վրաններու կամ յանպատրաստից հայթայթուած
ապաստարաններու տակ, եւ յատուկ վաճառա-
պետի (agoranomos) հսկողութեան ներքեւ էին¹:
Պաշտօնն անհետացած է, բայց տօնավաճառը մնա-
ցած, ինչպէս Զիլիէի մէջ ալ (տես վերը՝ Բ, § 12).
եւ թուրք Գե-Գե՛ր որ հոս կը նախագահէ, հեռաւոր
յաջորդ մըն է հելլենական քաղաքաբաշխու-
թեան: Եթէ կրօնական պատճառ մը միջնորդած
չըլլար՝ անհասկանալի կը մնար թէ ինչու այս
ամայի տեղն ընտրուած է հոն հաւաքուելու հա-
մար, որուն ջրերը նոյն իսկ խմելու յարմար չեն:
Սակայն այս ջրերուս զարմանալի յատկութիւնները
պատճառ եղած էին զանոնք իբրեւ աստուածեղէն
պաշտելու՝ եւ անոնց բուժիչ զօրութիւնը նաեւ
հիւանդներն այցելութեան գալու կը գրաւէր,
ճիշդ ինչպէս կ'ընեն տակաւին մեր օրերն ալ, ինչ-
պէս ըսին մեզի, ամառուան ամիսներուն:

¹ Հմմտ. Պր. Foucartի լուսարանութիւնը Անտա-
նիոյ արձանագրութեան, § 20 (Lebas-Foucart, p. 174).
— Հմմտ. Guiraud, Assemblées provinciales, 123; Me-
nadier, Qua condicione Ephesii usi sint (Berlin 1880),
p. 95. — Մարարոն՝ Գեղարի համար կ'ըսէ՝ Ժ, 5, 4
(էջ 486 C): Παρήγουτος ἐμπορικόν τι προῖμα ἔσται. (ամե-
նափողով տօնը սուրբաւորի է): — Բաղմաթիւ օրինակ-
ներուն միջէն, զորոնք կրնայինք հաւաքել ցուցնելու հա-
մար թէ նման ամենափոքրով տօներ կը շարունակուէին
քրիստոնէութեան ժամանակն ալ, կը շատանամ յիշելով
միայն մէկ հատ մը՝ որ Փոքր-Ասիոյ արեւելամասին կը վե-
համաստ (ԳԼ, 35, Թրգմ. Wright, էջ 25) եւ գարուն վեր-
սփռութիւն ունէին հոս հաւաքուելու ի միայն ամիս կող-
մերէն, ոմանք աղօթելու, եւ ոմանք ալ տօնաւորութեան
համար, որովհետեւ մեծ միջերէն կը պատրաստուէին ժո-
ղովրդեան համար՝ որ այս առթիւ հաւաքուած էրդ:

Նոյն իսկ Չերմիկ (Tchermik) անունը հին կերեւայ եւ տաճկական պլաճեութիւն մը հայերէն Զերմիկ բառին՝ որ համարմատ է յն. θερμός, լատ. Thermae բառերուն¹։ Ասկէ ոչ շատ հեռուն Munro գտած է հռոմէական ճամբու մը եւ կամըջ մը հետքեր, որոնք Նեոկեսարիայէ Նիկոպոլիս² տանող ճամբուն մնացորդներն են. եւ թերեւս Tauria գիւղը, որ երկու կամ երեք մղոն վերնակողմն է՝ բարձունքի մը վրայ, կը համապատասխանէ հին արքունի բնակավայրին Տաւլարա (Taulara), ուր Միհրդատ գրամ կը հասնէր³։ Դժբախտաբար գետն այնպէս յարգած էր որ հովտէն անցնիլն անկարելի ըրած էր, եւ մենք ստիպուեցանք լեռներու շատ աւելի տաժառեղին ճամբան բռնել։

Մայիս 22ին հետեւեցանք Վելիդի աջ ափին՝ մացառներու միջէն՝ մինչեւ Աճէ-օղլու (Atjéoglu) գիւղը՝ որ երկտասանեակ մը տներու խումբ մըն է. յետոյ սկսաւ երկայն ու դժուարին վերելք մը։ Պարխարի մէկ դօտին որ հոս Գայլ գետը կը պատէ, երկու հազար մետրէ աւելի կը բարձրանայ։ Նախ անցանք մշակութեանց եւ անտառներու միջէն մինչեւ Էրէ-ֆէ տաճկական գիւղը։ Աւելի վերը տեսարանը կը բացուի, եւ յստակօրէն կը նշմարենք ուրիշ գիւղերու շարք մը՝ որոնք լեռան հարաւային զառիվայրին վրայ պիտուած են՝ Զար-օղլու, Էր-օղլու, Պիլ-օղլու։ Անտառներու դօտին կը սկսի 1300 մետրէն, ուր շոճիները նախ կը խառնուին ուրիշներու եւ կ'ընկնեն ճեղք, յետոյ անոնց տեղը կը բռնեն։ Ասոնք մնացորդն են այն մեծ անտառին, որ մէկ կողմանէ Նեոկեսարիոյ եւ կոմանայի միջեւ, եւ միւս կողմանէ Վոյոնիայի եւ Նիկոպոլիսի միջեւ՝ բնական սահմանը կը կազմէր Պոնտոսի եւ Փոքր Հայոց⁴։ Ծառերն երթալով կը ցանցառնան 1700 մետր բարձրութենէն սկսեալ։ Հսկայ եղեւիններ՝ որոնք կղզեացեալ կը կանգնէին, կիսով ածխացած պառկած են գետին

վրայ, որուն իրենց ածիւնը պարարտութիւն կ'ըլլայ։ Հովիւները զատիկ վար տապալած են՝ անոնց տակ կրակ վառելով, ծառագերծութեան շարժուք գործն այսպէս շարունակելով։ Կը մտնենք բարձրագիւր արօտներու շրջանը, որոնց ամառատանները տակաւին դատարկ են բնակիչներէ։ Տիրագոյն լճակի մ'եղբերը, նոստատուեր անտառակի մը մօտ, խումբ մը հիւղեր՝ որոնք չորէք-կուսի կոշա տաշուած գերաններով շինուած են, կը սպասեն ձիերու եւ արջառներու գալուն։ Աօի քէ-Է-Ե-յալ կոչուածն է (Պակ)։ Որչափ կը բարձրանա՞ք՝ բուսականութիւնն երթալով կը խեղճնայ, եւ նոյն իսկ սիլվադիները դժուարութեամբ կ'աճին կեանքէ զուրկ հողի մը վրայ։ Լեռան չոր կամըքն առնէ կողմ իրեն գոյզն դալարուած ծածկոյթը պատուելով դուրս կը ցցուի. եւ երաշխի լեռնագարներուն վրայ ձեռն ընդարձակ կոյտեր իրենց ձիւնահալքը տակաւին նոր կ'աւարտեն (Պակ)։ Այս քարուտ արօտատեղիներէն անդին՝ հետզհետէ երեւան կ'ելլեն՝ հիւսիսէն ու հարաւէն՝ Պոնտական լեռնաշղթային ու Կապպադոքիոյ բարձանց սպիտակափայլ կատարները։

Լեռնանցքին գագաթը հասնող Դէ-Է-Ե-յալէն անդին՝ 1970 մետր բարձրութեամբ, եւ անկէ ետքը խորամուխ եղանք Մէլէտ-Իրմալի՝ հին Մէլէտի գետոյն աւաղանն, որ կը հաւաքէ այս լեռներու՝ որոնք այնչափ մօտ են Գայլ գետոյն, բոլոր ջրերը եւ զանոնք ուղղակի կը տանի գէպ ի Սեւ Ծով՝ խորունկ խոխով մը միջէն, որ ծովեղբերայ լեռնաշղթան գրկէ անոր ամբողջ թանձրութեամբ կը ձեղքէ։ Անցանք Աֆանի ամառանոցը՝ գեղանկար հաւաքոյթ մը ալպան փայտակերտ տնիկներու, շինուած եղեւնատանի մը եղբը՝ փոքրիկ լճի մ'ափին վրայ, եւ իրիկունը հասնող Աֆան բուն գիւղը (1582 մետր)։ Աօի սիրուն վարչատեղը (Ֆի-Կիլիս) մըն է, փոքրիկ դաշտի մը ծայրը՝ որ ծածկուած է դալարեօք. իւր տները կը պատեն հեղեղատ մը, ուր կը հոսէ լճի մ'ափին մը, եւ ըջկապատուած են մրգատուններէ՝ ուր հիւանալիօրէն կ'աճին տանձիները։ Մեղրուներու պարսեր կը սնանէին մարգագետիններու ծաղիկներով, եւ կըցանք վարչին (Ֆի-Կիլիս) փեթակներուն բերքէն վայելել՝ առանց մեր խելաց վրայ զգալու այն մնաստեբ արդեցութիւնները՝ զորոնք հինները կը վերագրէին պոնտական մեղրին¹։ Երբ կրակին բուրբը կը խօսակցէինք՝ մայր մանող արեւը ծիրանեղոյն կը ներկէր հեռուն Կարագէօլի ձիւնապատ ատամնաձեւ գագաթները՝ որ Մէլէտէն անդին կը բարձրանան, եւ երկնագոյն փայլիլ կու տար այս լեռան անծանօթ ստանալիցաները, զորոնք Եւրոպայի մը երբեք չէ հետաքոտած²։

¹ Ստրաբոն, ԺԲ, 3, § 18. Բոնեոփոն, Արշ. Գ., 8, 20. Հմմտ. Th. Reinach, Mithridate Eupator, p. 228, n. 5. — Անգերսըն կը գրէ թէ Պոնտոսի այլեւայլ կողմերը զինքն զգուշացուցին մեղր ճաշակելու վտանգէն։

² Կիլիս, Աս. ՏՃԿ. Ա. 786 Կարագէօլի գագաթներուն 2600 մետր բարձրութիւն կու տայ՝ կ'երեւայ օամանեան սպայից կամ ճարտարագիտաց տուած տեղեկութեանց համաձայն։ Մենք անոնց աւելի բարձրութիւն մ'ընծայելու միտեալ էինք։

¹ Ամեն անգամ որ հանդիպած ենք ձեւերու Չերմիկ, Չերմիկ կամ Չերմիկ՝ Սուրբ-Սերայի մօտ (տես վերը § 14), Կարա-Հիսարի ճամբուն վրայ (տես քիչ մը վարը) կամ Նոյն իսկ Գիսարեկիին նահանգին մէջ, ուր Չերմիկ (Չերմուկ) կենդրոնատեղին է վիճակի մը (է-Է-Է), կը նշանակէ միտ տեղ մը՝ ուր չերմիկ (հանգիստ) ջրեր կը բղկեն։ — [Ա. Եղեւնէլու է որ Չերմիկ կամ Չերմուկ է արդի անունը տաք աղբիւրներուն ի պիակա Մեթուէնէի մէջ եւ Արարնէ՝ Աերին Միջագետաց մէջ (Վերջնոյ համար Հմմտ. G. Hoffmann, առ. Wright, Joshua Stylites, p. 24, n.; Gelzer, Georg. Cyprius, p. 160 f.). Անունն ոչ թէ ուղղակի Thermaի աղապարտութիւնն է, այլ մանաւանդ հայերէն Զերմիկ ձեւն է (Հմմտ. Tomasehek, անդ. հայերէն Զերմիկ ձեւն է (Հմմտ. Tomasehek, Kiepert-Festschrift, p. 140). Բառին արմատը կ'երեւայ բառ-ձեւէն Զերմիկ, անգլ. gharma, յն. θερμός, լատ. formus, անգլ. warm, եւ (ինչպէս Կիլիսի մասնաին կ'ընէ) Փոնտական աղբիւրներու՝ Germe տեղից անունն մէջ (Hiera Germe, Germe Colonia) — Ա. Երեւան]։

² Munro, անդ. էջ 730։

³ Th. Reinach, l'Histoire par les Monnaies, 1902, p. 140 (= «Rev. numism.» 1900, p. 230). — Բաղձալի էր որ ուղեւոր մը քննէր թէ արդեօք Tauriaի մէջ բերդի որեւէ հետք չի գտնուիր։

⁴ Bellum Alexandrin. c. 35; Հմմտ. Ստրաբոն, ԺԲ, 3, § 19, § 28։

Երկրորդ օրը (23 Մայիս) հարկ եղաւ որ մեր կարաւանը բաժնուի. եղբայրս բեռներով շիտակ դիմեց դէպ ի կէջյուլ-Հիսար՝ երթալով գետնի ի վեր Մէլէտի մէկ օժանդակին երկայնքէն, յետոյ Գիւլէ-Դաղին անտառներուն մէջէն հետեւելով կէլիդի նեղ աւաղանին գագաթնագծին, եւ վերջապէս իջնալով դէպ ի կէջյուլ: Իսկ ես ստիպուեցայ՝ ոստիկանի մը (չալիէ) առաջնորդութեամբ՝ շրջան մ'ընել դէպ ի հիւսիս, որպէս զի մեր անցագրերն երթամ ներկայացընեմ Հաֆիէի գոյմախին¹:

Աֆանէ ելելէն ետքը հետեւեցայ սեպակող հովտին Սիմա-Սուի, որ մեծ վտակ մըն է եւ կը թափուի Մէլէտի մէջ՝ Աֆանէ երկու ժամ անդին դէպ ի հիւսիս-արեւելք, եւ կ'ոռոգէ բազմաթիւ գիւղերը՝ որոնք զառիվներու վրայ աստիճանաբար կեցած են՝ կէշլէ-Ի, Բալիէ, Թաւր-Ի, Էյ: Այս երկու վերջիններու մէջտեղ գեղացի մը ցուցոց ինծի արտի մ'ափը դրուած երկու քանդակազործ քարեր. մին մեծ տափարակ քար մըն է՝ զիսազարդ շրջանակաւ, անտարակոյս՝ պատուանդան մը: Միւսը հաստաբետ առիւծ մըն է թանձրաբուստ դրօշուած (երկայնք՝ 0.85 մ. բարձրութիւն՝ 0.80 մ. թանձրութիւն՝ 0.30 մ): Բաւական կը յիշեցնէր մեր ձիախաղակաց (carrousel) փայտէ ձիերը (Պտկ.): Թաթերը նշանակուած են միայն փորին տակ կամարածեւ փորուածքով մը եւ վերը երկու գծով եռանկիւնակ մը կաղմելով: Աւելի անհետ թեթ մանրամասնութիւն մըն է որ ագին փոխարինուած է երկու տեսակ տերեւներով՝ որոնք իրենց կոթունով միացած են իրարու: Գիւլացին պատմեց թէ այս «առիւծը» (արաւն) եւ միւս քանդակաքարը հին գերեզմանէ մըն են: Իւր ծագման նկատմամբ չենք համարձակիր վճիռ մը տալու: Տեղական քանդակազործութեան պարզամիտ կերպերն անշուշտ որեւէ փոփոխութիւն կրած չեն երկար դարերու ընթացքին մէջ: Բայց կը կարծենք թէ կարելի չէ մտաբերել այս անձեւ անասունը «հատեան առիւծ» մը (հիտտեան) համարելու: Այն ատեն մկանունքն շատ աւելի ճշգրտագոյն կ'ըլլային եւ կերտուածն ալ այսպէս համառօտագիծ չէր ըլլար:

Մէլէտի հին աւանը, որ Հաֆիէ պաշտօնական անունն առած է, մեծաւ մասամբ նոր հիմնարկութիւն մըն է արդի (այժմ՝ նախընթաց) սուլթանին: Տեղապահ (գոյմախ) մը նիստն է, եւ այժմ իբր երկու հարիւր տուն ունի, որոնց կոկուլութիւնն աչքի կը զարնէ, եւ բազմամթեր շուկայ մ'ունի. այսօր ալ տակաւին կը շինուի: Կրով բռնուած շինութիւնները խմբուած են գետակի մը եւ Մէլէտ-Իրմակի գետախառնուքին վրայ, եւ վերջինս հոս արդէն նշանաւոր գետ մ'եղած է, վրան գեղեցիկ կամուրջ մը ձգուած: Գոթախտաբար Համիտի կպած է բարձրաբերձ քարաժայռերուն, եւ տօթն անտանելի է ամառը:

Պեւտինգերեան Տախտակը կը նշանակէ Պոզեմնիումէ դէպ ի Նիկոպոլիս ճամբայ մը, որ՝ եթէ ստուգիւ տարբեր էր Նիկիտաբիայէն Նիկոպոլիս

¹ Առաջին ուղին նշանակուած է մեր ԻԱ քարտէսին վրայ լիովին կարմիր գծով մը, իսկ երկրորդը մերձաւորապէս նշանակուած է կիտաւրեալ գծով մը:

գացող ճամբէն, ի հարկէ պիտի հետեւէր Մէլէտի (Մէլէտի) բարձր հովտին՝ ասիէ անցնելու համար Բուլեման-Չայի հովիտը (Սեթեման գետ՝ Si-denus fluvius). Բայց քանի որ այս ճամբուն ուղեգիծը տակաւին բոլորովին անորոշ է այս շատ քիչ հետազոտուած երկրիս մէջ, աւելի լաւ է՝ նոր գիւտերու սպասելով՝ չփորձել ղեւեղելու Սաւրմիսեն (Sauromisena) եւ Մատուասկոյ (Matuasco) կայանները, որոնք այս հին ուղեցոյց-քարտէսին վրայ նշանակուած են¹:

Համիտի կէջյուլ-Հիսարի հետ կապուած է կառագնաց ճամբով մը, որ մէկ հատածն է նոր խճուղոյն, որ Օրգուի նաւահանգստէն կը տանի Սեբաստիա՝ օգտուելով Մէլէտի երկայն ճեղքուածքէն: Համիտի աւանէն ելելէն ետքը ճամբան կը թողու գետը եւ անցնելով Սաւրմիսէն (3/ ժամ հարաւային հարաւ-արեւելք) կը հասնի սոճիապատ լեռնադաշտ մը: Ծառերը հոյակապ են, եւ փոխադրութեան միջոցներուն պակսելով՝ հին անտառն ազատ կը մնայ փայտահարներու աւերումներէն: Հովէն տապալած հսկայ կոճիքը տեղն ի տեղը կը փոխն: Կէգուշ (Kégoush) գիւղէն (2 ժամ Համիտիէն) անդին կ'անցնինք Մէլէտի վերջին մէկ օժանդակը՝ Բալգերան-Սու, եւ յետոյ միշտ անտառներուն մէջէն կը հասնինք Իդրիդ-Տաղի գագաթնագիծը, եւ քիչ մ'ետքը (Համիտիէն 5 ժամ) յանկարծ դուրս կ'ելլենք կէջյուլ-Հիսարի վրան, որուն՝ պարտէզներու մէջ ցրուած երեք կամ չորս հարիւր տները յանկարծ կը տեսնուին բլուրներու մէջ՝ Գայլ գետէն քիչ մը հեռու (Պտկ.): Լեռան գահավեժ ու լեւրի դարերը հեղեղատուած են ջրերէ, որոնք պէտք է որ ամէն մրկին իւր կողերէն՝ որոնք սպիանէ ծակկուած են, առնուն ու վար բերեն դեղնորակ կաւահողի մը կոյտերը. իսկ ճամբան երկայն ու բազմազաւար դարձուածներով կ'իջնայ դէպ ի փոքրիկ քաղաքը, որ կարծես հսկայ կոնքի մը խորքը ագուցուած է:

§ 24. Կեոյու-Հիսարէ կոյու-Հիսար (քարտէս ԻԲ): — Արդի կէջյուլ-Հիսար ալ Համիտիէի պէս տեղապահութիւն մըն է (գոյմախ)՝ Օրգուէն Սեբաստիա տանող ճամբուն վրայ հաստաթիւն մը չունի: Այն բերդը (էնթ) որ գաւառակաղաւթ տեղոյս իւր անունը տուած է, իբր մէկ մղոն դէպ ի արեւելք հեռու է:

Գղեկին տեսքը գրաւիչ է (Պտկ.) եւ զմայլեցուցած է այն սակաւաթիւ ուղեւորներն՝ որ մօտեցած են անոր²: Թառած է սարածայրի մը վրայ

¹ Կերեդիւր վերջին քարտէսին վրայ Sauromisena նշանակուած է նոյնապէս Համիտիէի հետ: Միւս մէկ մը Matuascone կը զետեղէ Մոդասուն (Modasu) կամ Մոդասուն (Modasun) տեղը Գայլ գետի հովտին մէջ: Այն ատեն հին ճամբուն ուղեգիծը զգալապէս չէղած ըլլալու է արդի խճուղիէն, եւ դէպ ի Աֆան ելելու էր:

² Munro (անգլ. էջ 729) կը յիշէ սակայն «քար մը մը բարաւորը», սակայն այս քարն անշուշտ ուրիշ տեղէ մը բերուած էր:

³ Ասոնք փորձած են յաճախ աւելի կամ նուազ յաջողութեամբ պատկերացընել անոր տեսքը: Շատ գոյշ

երկինագոյններ: Տեղ տեղ յառաջ ցուած քառա-
 ժայռի մը վրայէն պէտք է անցնիլ անտիճանաձեւ
 նրբուղիով մը: Հողը երաշտին է. հոս ու հոն
 կ'աճին քանի մը ողնաթէք եղեւիններ, կիւի
 թաւուտներ եւ մորմեններ: Գետը՝ որուն լայնու-
 թիւնը քառասուն մետրի չափ է, թանձր սկահող
 մը տանի հետը: Իւր գեղնորակ ջրերը մերթ կու-
 տակազէզ կը ծփին ու յորձանալից կը փոթորկին
 խարկներուն մէջ եւ մերթ խաղաղիկ լռին կը
 սահին աւազուտ խութերուն միջէն, որոնք փոշիա-
 ցած են ժայռերուն քայքայուելովը: Հովիտն
 անմշակ է եւ անբնակ (Պտկ.): Առաջին գիւղը
 Կէօլու-Հիսարէն հինգ ժամ հեռու է՝ Արդ-Վի
 անուն (Արդ-Վի գարիկ): Որ իբր հարիւր երդ ու-
 նեցող հասարակութիւն մըն է: Գիմացը՝ գետոյն
 միւս ափը՝ նոր շինուածքը, ինչպէս ըսին, Զեբ-
 րադինքն է, որուն համար ծծմբային ջերմկանքին
 աղբիւրն ակնակալ բրած են, եւ ուր հիւանդները
 կը յաճախեն:

Ասկէ քիչ մ'անդին՝ Կելիկը կ'անցնինք
 նորօրինակ կամրջէ մը: Քարաշէն թանձր կամրջա-
 կաններու վրայ դետեղուած է փայտեայ կամրջայա-
 տակ մը՝ զոր վեր կը բռնեն ծառակոճղեր, որոնք
 վրայէ վրայ դրուած արտակարկառուն շարքերով
 սուտ կամար մը կը ձեւացնեն: Քիչ մ'անդին՝
 խորշելու համար նեղ ու խոր խոխով մը՝ ուր գետը
 մանշելով կը բախի զինքը սեղմող ապառաժ ափա-
 փայից դէմ, հարկ եղաւ որ ելլենք կարմիր աւաղա-
 քարէ բլուրներն՝ որոնք հարաւային ափը կը պա-
 տեն, մինչեւ Զեբ-րա՝ գիւղը, որ անդնդային վճի
 մը եզերքը հակած է: Գիւղն ունէր իբր հնգետա-
 սան քարաշէն տներ՝ հողածածկ տանիքներով:
 Գիմացը կը կանգնէր՝ մառախլապատ գլխով՝
 Զիպրահան լեռը, որուն կատարն՝ ինչպէս գիւղա-
 ցիք կը պատմէին, կը կրէ քրիստոնէական մատուռ
 մը, որ շատ յաճախուած ուխտատեղի մըն է: Ան-
 տարակոյս աս ալ ուրիշ մնացորդ մըն է բարձանց
 այն պաշտաման, որուն այս աշխարհին մէջ յարա-
 տեւ մնալը շատ անգամ հաստատեցինք:

Ասկէ ետքը ճամբան դարձեալ կ'իջնայ դէպ ի
 Կելիկը եւ գետը կը հասնի՝ ճիշդ կրճին մուտքը,
 ուր երկկամար կամուրջ մը՝ Կուրբա-Քեօփրիւ ա-
 նուամբ՝ կը միացնէ քարաժայռին երկու կեռիքը
 (Պտկ.): Յետոյ վերջնականապէս կը թողու գետը
 եւ բլուրները կտրելով կ'ելլէ դէպ ի Կարա-
 Հիսար: Չնայելով իւր գրից բարձրութեան՝ եր-
 թալով գեղապուրճ կ'ըլլայ երկիրը: Գետինն ամէն
 ծաղքերուն մէջ վտակներ կը հոսին, եւ ցորենի
 արտորայք կը դալարանան բլրակողերուն վրայ,
 ուր գիւղերն ալ կը բազմանան: Երկուքուկէս ժամ
 մեղմով վեր ելլեն ետքը՝ կը հասնինք լեռնազաշտ
 մը հազար հինգ հարիւր մետրէ աւելի բարձրու-
 թեամբ, եւ յանկարծ կ'երեւայ Կարա-Հիսար՝
 կռթնած հսկայատարած քարաժայռի մը, որ կը
 կրէ անոր «Սեւ բերդը»:

(Շարունակելի:)

Հ. Յ. Տ.



HISTORISCH

Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen.

(Fortsetzung.)

Es ist nun scheinbar nichts einfacher als die Annahme, dass *Marat* aus dem syrischen *Mār aṭṭen* verkürzt sei; in Wirklichkeit wäre jedoch eine derartige Verstümmelung sehr schwer begreiflich. Allein Balāḍurī ٢١١, 16 hat uns die Nachricht aufbewahrt, dass der eigentliche Volksname der Bewohner von Chojt' *الارطان Ariṭān*, bzw. *Araṭān* war. Es scheint mir daher wahrscheinlicher, dass wir in *Marat* diesen Namen mit dem Präfix *m-*, das vermutlich auch in dem Gebirgsnamen *جبل مسينا* am oberen Euphrat¹ vorliegt und uns öfters in den iberischen Ländern begegnet², vor uns haben. Sollte sich in jenem Volksnamen etwa ein Ueberrest des alten Namens und Volkes der *Urartu* oder *Alarodier* erhalten haben³? Dies erscheint keineswegs unwahrscheinlich⁴, wenn man bedenkt, was Thomas Arctuni von den Bewohnern

¹ Qodāma ٢٣٣, 9. Ibn Serapion, JRAS. 1895, p. 10, 5, 46. Vgl. TOMASCHEK, Festschr. f. Kiepert, S. 147.

² Vgl. z. B. *Argwel* und *Margwel* (Streifzüge, S. 171).

³ In diesem Falle würde sich die Uebertragung des Landes *Ararad* des Marabas auf Taraun und das Taurosgebirge durch Ps. Moses Chorenac'i (oben Sp. 182) sehr einfach erklären.

⁴ [In diesem Falle wäre eine haplogische Zusammenziehung von **Orar(a)t*, **Arar(a)t* zu *Art* anzunehmen. Die Wahrscheinlichkeit dieser Vermutung wird um so grösser, als wir, wenn nicht alles trügt, auch in den noch im 6. Jahrh. eine weder armenische noch arnäische Sprache redenden *Ortāje* im Gau Hanžit' einen Ueberrest der alten *Urartäer* zu erblicken haben. Also auch hier *Ortāje* < **Orart*, *Urartu*. S. meine Armenischen Streifen: *Huschardzan*, S. 296. Der alte Name *Urartu* hätte demnach in historischer Zeit noch in vier verschiedenen Gegenden Spuren hinterlassen:

1. *Alarodios*, Արարատ im Araxestal;
2. *ܡܪܬܐ* Gen. 8, 4, *Արարադ* (*Sa-Ararad*?) in Bohtān Faust. Byz. 3, 10, S. 22, *Արարադ* Mar Abas (oben Sp. 178—181);
3. *ܠܬܝܐ* *Ortāje* in Hanžit;
4. *Արարաթ* *M-arat*, der heutige Mallato-Dag, im Gebirgslande Chojt'.]